Հավելված 7
*ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08* **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ և ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08

գ.Ճամբարակ «16» ապրիլ 2018 թ

ՀՀ Գեղարքունիքի մարզի ''Ճամբարակի Առողջության Կենտրոն''ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Արմենակ Մելքումյանի այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ »ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել

ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է / 1325963 մեկ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր վաթսուներեք /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[1] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[2] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

8.13 Պայմանագիրը կազմված է —— էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
Ճամբարակ մ/ճ
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165
Էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

« Նատալի Ֆրամ» ՍՊԸ
Ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
h/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

ստորագրություն

Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը*** | չափման միավորը | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | |
| | | | | | | Միավորի գին | Ընդհանուր գին | ենթակա քանակը | ժամկետը | հասցեն |
| 5 | 33621100/ 3 | Հեպարին մազ | Հեպարին, անեսթեզին, բենզիլ նիկոտինատ heparin, anesthesin, benzyl nicotinateb քսուք 0.833մգ/գ+40մգ/գ+0.8մ գ/գ | հատ | 70 | 535 | 37450 | 70 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք՝ Ճամբարակ Տ. Մեծի 17 |
| 6 | 33691136/ 6 | Նատրիումի քլորիդ 0.9 % 10.0 մլ | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 10մլ | ամպ | 300 | 71 | 21240 | 300 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք՝ Ճամբարակ Տ. Մեծի 17 |
| 8 | 33621370/ 2 | Կոկարբոքսի լազա | Կոկարբոքսիլազայի հիդրոքլորիդ 50մգ 2մլ լուծույթ ներարկման. | ամպ | 600 | 169 | 101400 | 600 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ | Ք՝ Ճամբարակ Տ. Մեծի 17 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 33661158/2 | Ադրենալին 0.1% 1.0մլ | լուծույթ, ներարկման | սրվակ | 30 | 133 | 3990 | 30 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 15 | 33621720/2 | Կոնկոր | Կոնկոր 5մգ (Concor 5mg), բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) bisoprolol (bisoprolol fuma | հաբ | 500 | 8 | 3950 | 500 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 18 | 33631310/3 | Դիկլոֆենակ 75 | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 75մգ | հաբ | 300 | 52 | 15600 | 300 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 20 | 33611150/2 | կրեոն | Պանկրեատին (լիպազ 10000ԵՖՄ, ամիլազ 8000 ԵՖՄ, պրոտեազ 600 ԵՖՄ) pancreatin (lipase 10000PhEU, amylase 8000 PhEU, protease 600 PhEU) դեղապատիճ աղելույծ 150մգ | դեղապատիճներ, աղելույծ | 300 | 101 | 30300 | 300 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 21 | 33691191/1 | Էսֆոլ | Էսենցիալ ֆոսֆոլիպիդներ (essential phospholipids) լուծույթ ն/ե ներարկման 250մգ/5մլ, 5մլ | Սրվակ | 150 | 625 | 93750 | 150 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների | Ք' Ճամբարա[illegible] կ'Տ. Մ[illegible] 17 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | |
| 26 | 33611153/3 | Դեքսամետա զոն 4 մգ 1.0 | Դեքսամեթազոն dexamethasone լուծույթ ներարկման 4մգ/մլ, 1մլ | ամպ | 1000 | 46 | 46000 | 1000 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 30 | 33621100/2 | Հեպարին 5.0 | Հեպարին (Heparin).լուծույթ ներարկման 500մլ | ամպ | 25 | 820 | 20500 | 25 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 31 | 33621210/1 | ֆերրիում Լեկ | Ֆերում Լեկ (Ferrum Lek). լուծույթ, մ/մ ներարկմա 50մգ/2մլ, 2մլ ամպուլներն. | ամպ | 10 | 720 | 7200 | 10 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 35 | 33631284/2 | Տավեգիլ | Կլեմաստին clemastine դեղահատ 1մգ | հաբ | 150 | 63 | 9450 | 150 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 39 | 33670000/2 | Էրեսպալ 80 մգ | Ֆենսպիրիդ fenspiride դեղահատ 80մգ | հաբ | 100 | 110 | 11014 | 100 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ | Ք' Ճամբարա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | 17 |
| 40 | 33691112/1 | Մետրոնիդազոլ 0.5 մգ | Մետրոնիդազոլ, metronidazole դեղահատ 500մգ | դեղահատ | 800 | 44 | 35200 | 800 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 47 | 33691226/2 | Տրամադոլ 50 մգ | Տրամադոլ tramadol 50մգ դեղահատ | հաբ | 2000 | 28 | 56000 | 2000 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 52 | 33661122/2 | Ցետամոլ 0.325 | Պարացետամոլ paracetamol մոմիկներ ուղիղաղիքային 325մգ | մոմիկ | 400 | 63 | 25200 | 400 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 55 | 33611190/1 | Գլիցերինի մոմիկ գր | Գլիցերոլ glycerol մոմիկ ուղիղաղիքային 1000մգ | մոմիկ | 300 | 86 | 25800 | 300 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 58 | 33651118/2 | Ցեֆտրիաքսոն | Ցեֆտրիաքսոն աստերիա ceftriaxone asteria դեղափոշի ներարկման լուծույթի, 1000մգ, սրվակ | ֆլ | 200 | 147 | 29400 | 200 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 63 | 33611220/1 | Ռեհիդրոն | Ռեհիդրոն (Rehydron), դեղափոշի, դեղաչափավորված,3.5գ + 2.5գ + 2.9գ + 10գ, 18.9գ փաթեթիկներ | հատ | 500 | 235 | 117500 | 500 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 64 | 33630000/2 | Սինտոմիցին մազ 10% | Սինտոմիցին /sintomicine/նրբամածուկ 10% | հատ | 40 | 320 | 12800 | 40 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 67 | 33631230/1 | Բետադին հեշտոց մոմիկ 200 մ | Հեշտոցային մոմիկներ20% 200մգ | հատ | 200 | 120 | 24000 | 200 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 71 | 33661164/1 | Դիտիլին 2x5մլ | սուքսամեթոնիում (սուքսամեթոնիումի յոդիդ) suxamethonium (suxamethonium iodide), լուծույթ, ն/ե ներարկման, 20մգ/մլ, 5մլ ամպուլներ (10) և կտրիչ, 5մլ ամպուլներ բլիստերում (5/1x5/, | ամպ | 120 | 200 | 24000 | 120 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 10/2x5/) և կտրիչ | | | | | | օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | |
| 73 | 33611341/2 | Միլգամմա 2 մգ | Թիամին (թիամինի հիդրոքլորիդ), պիրիդօքսին (պիրիդօքսինի հիդրոքլորիդ), ցիանոկոբալամին, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) thiamine (thiamine hydrochloride), pyridoxine (pyridoxine hydrochloride), cyanocobalamine, lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ մ/մ ներարկման 50մգ/մլ+50մգ/մլ+ 500մկգ/մլ+ 10մգ/մլ, 2մլ ամպուլ | ամպ | 160 | 470 | 75200 | 160 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ Տ. Մեծի 17 |
| 76 | 33631290/2 | Իբուֆեն 100 մլ | իբուպրոֆեն (ibuprofen).100մլ օշարակ | ֆլ | 200 | 680 | 136000 | 200 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ Տ. Մեծի 17 |
| 83 | 33631284/1 | Տավեգիլ 2.0/կլեմաստին/ | Կլեմաստին clemastine լուծույթ ներարկման 1մգ/մլ, 2մլ ամպուլ | ամպ | 50 | 180 | 9377 | 50 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ Տ. Մեծի 17 |
| 88 | 33661157/1 | Ատրոպին 0.1 % 1.0 | Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate) լուծույթ ներարկման 1մգ/մլ, 1մլ | ամպ | 50 | 54 | 2700 | 50 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ Տ. Մեծի 17 |
| 89 | 33661127/ | [illegible] | Լուծույթ ներարկման 500մգ/մլ, [illegible] | ամպ | 200 | 144 | [illegible] | 200 | 2-3րդ եռամսյակ, | Ք' |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | u 5.0 | ամպուլ | | | | | | պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ճամբա[illegible] կ'Տ. Մեծի 17 |
| 93 | 33651112/3 | Ամոքսիկլավ /625 պանկլավ/ | Ամոքսիցիլին , քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղահատ 500մգ+125մգ | հաբ | 300 | 116 | 34800 | 300 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 94 | 33691213/1 | Լինեքս | Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium) lyophilized viable lactic acid bacterias (Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium) դեղապատիճ 1,2x10^7 | դեղապատիճ | 800 | 43 | 34400 | 800 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. * | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 95 | 33621310/1 | տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) trimetazidine (trimetazidine dihydrochloride) | Պրեդուկտրիմ ՄՌ (Preductrim MR), դեղահատեր, թաղանթապատ, երկարատև ձերբազատմամբ,35մգ | հաբ | 300 | 22 | 6540 | 300 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |
| 98 | 33661136/1 | Ապուրին 2 մլ 10 մգ | լուծույթ ներարկման 10մգ/մլ, 2մլ | ամպ | 300 | 80 | 24000 | 300 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն | Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | |
| 101 | 33691202/2 | Դիցինոն 2.0 250 մգ մգ/էտամ | Էտամզիլատ (etamsylate), լուծույթ, ներարկման, 250մգ/2մլ, 2մլ ամպուլներ | ամպ | 1000 | 170 | 170000 | 1000 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ Տ. Մեծի 17 |
| 102 | 33621620/1 | Վերոշպիրոն 25 մգ/սպինորլակ | Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 25 մգ | հաբ | 1500 | 35 | 52500 | 1500 | 2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* | Ք' Ճամբարակ Տ. Մեծի 17 |

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Ապրանքը մատակարարելիս պետք է ունենա որակի սերտիֆիկատ, եթե կիրառելի է:*

**ապրանքը կարող է մատակարարվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ավելի կարճ ժամկետում, եթե մատակարարը համաձայն է*

**** 2,5 տարվանից ավելի պիտանելության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ*

*Մինչև 2,5 տարի պիտանելության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն երկու երրորդը, Առանձին դեպքերում , այն է հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը , դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:*

**ԳՆՈՐԴ**

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
Ճամբարակ մ/ճ

**ՎԱՃԱՌՈՂ**

« Նատալի Ֆրամ» ՍՊԸ
Ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567

Հ/Հ 16023012502500, ՀՎՀՀ 08617165
Էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն

Կ.Տ

Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/

Հավելված Ν
« 16» 04 2018 թ. կնքված ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08

ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 5 | 33621100/3 | Հեպարին մազ | 18725 | 18725 | 18725 | 28087.5 | 28087.5 | 28087.5 | 37450 | 37450 | 37450 |
| 6 | 33691136/6 | Նատրիումի քլորիդ 0.9 % 10.0 մլ | 10620 | 10620 | 10620 | 15930 | 15930 | 15930 | 21240 | 21240 | 21240 |
| 8 | 33621370/2 | Կոկարբոքսիլազա | 50700 | 50700 | 50700 | 76050 | 76050 | 76050 | 101400 | 101400 | 101400 |
| 9 | 33661158/2 | Ադրենալին 0.1% 1.0մլ | 1995 | 1995 | 1995 | 2992 | 2992 | 2992 | 3990 | 3990 | 3990 |
| 15 | 33621720/2 | Կոնկոր | 1975 | 1975 | 1975 | 2962 | 2962 | 2962 | 3950 | 3950 | 3950 |
| 18 | 33631310/3 | Դիկլոֆենակ 75 | 7800 | 7800 | 7800 | 11700 | 11700 | 11700 | 15600 | 15600 | 15600 |
| 20 | 33611150/2 | կրեոն | 15150 | 15150 | 15150 | 22725 | 22725 | 22725 | 30300 | 30300 | 30300 |
| 21 | 33691191/1 | էսֆոլ | 46875 | 46875 | 46875 | 70313 | 70313 | 70313 | 93750 | 93750 | 93750 |
| 26 | 33611153/3 | Դեքսամետազոն 4 մգ 1.0 | 23000 | 23000 | 23000 | 34500 | 34500 | 34500 | 46000 | 46000 | 46000 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | 33621100/2 | Հեպարին 5.0 | 10250 | 10250 | 10250 | 15375 | 15375 | 15375 | 20500 | 20500 | 20500 |
| 31 | 33621210/1 | ֆերրիում Լեկ | 3600 | 3600 | 3600 | 5400 | 5400 | 5400 | 7200 | 7200 | 7200 |
| 35 | 33631284/2 | Տավեգիլ | 4725 | 4725 | 4725 | 7088 | 7088 | 7088 | 9450 | 9450 | 9450 |
| 39 | 33670000/2 | Էրեսպալ 80 մգ | 5507 | 5507 | 5507 | 8261 | 8261 | 8261 | 11014 | 11014 | 11014 |
| 40 | 33691112/1 | Մետրոնիդազոլ 0.5 մգ | 17600 | 17600 | 17600 | 26400 | 26400 | 26400 | 35200 | 35200 | 35200 |
| 47 | 33691226/2 | Տրամադոլ 50 մգ | 28000 | 28000 | 28000 | 42000 | 42000 | 42000 | 56000 | 56000 | 56000 |
| 52 | 33661122/2 | Ցետամոլ 0.325 | 12600 | 12600 | 12600 | 18900 | 18900 | 18900 | 25200 | 25200 | 25200 |
| 55 | 33611190/1 | Գլիցերինի մոմիկ գր | 12900 | 12900 | 12900 | 19350 | 19350 | 19350 | 25800 | 25800 | 25800 |
| 58 | 33651118/2 | Ցեֆտրիաքսոն | 14700 | 14700 | 14700 | 22050 | 22050 | 22050 | 29400 | 29400 | 29400 |
| 63 | 33611220/1 | Ռեհիդրոն | 58750 | 58750 | 58750 | 88125 | 88125 | 88125 | 117500 | 117500 | 117500 |
| 64 | 33630000/2 | Սինտոմիցին մազ 10% | 6400 | 6400 | 6400 | 9600 | 9600 | 9600 | 12800 | 12800 | 12800 |
| 67 | 33631230/1 | Բետադին հեշտոց մոմիկ 200 մ | 12000 | 12000 | 12000 | 18000 | 18000 | 18000 | 24000 | 24000 | 24000 |
| 71 | 33661164/1 | Դիտիլին 2x5մլ | 12000 | 12000 | 12000 | 18000 | 18000 | 18000 | 24000 | 24000 | 24000 |
| 73 | 33611341/2 | Միլգամմա 2 մգ | 37600 | 37600 | 37600 | 56400 | 56400 | 56400 | 75200 | 75200 | 75200 |
| 76 | 33631290/2 | Իբուֆեն 100 մլ | 68000 | 68000 | 68000 | 102000 | 102000 | 102000 | 136000 | 136000 | 136000 |
| 83 | 33631284/1 | Տավեգիլ 2.0/կլեմաստին/ | 4689 | 4689 | 4689 | 7033 | 7033 | 7033 | 9377 | 9377 | 9377 |
| 88 | 33661157/1 | Ատրոպին 0.1 % 1.0 | 1350 | 1350 | 1350 | 2025 | 2025 | 2025 | 2700 | 2700 | 2700 |
| 89 | 33661127/1 | Բարալգետաս 5.0 | 14351 | 14351 | 14351 | 21527 | 21527 | 21527 | 28702 | 28702 | 28702 |
| 93 | 33651112/3 | Ամօքսիկլավ/625 պանկլավ/ | 17400 | 17400 | 17400 | 26100 | 26100 | 26100 | 34800 | 34800 | [illegible] |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 94 | 33691213/1 | Լինեքս | 17200 | 17200 | 17200 | 25800 | 25800 | 25800 | 34400 | 34400 | 34400 |
| 95 | 33621310/1 | տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) trimetazidine (trimetazidine dihydrochloride) | 3270 | 3270 | 3270 | 4905 | 4905 | 4905 | 6540 | 6540 | 6540 |
| 98 | 33661136/1 | Ապաուրին 2 մլ 10 մգ | 12000 | 12000 | 12000 | 18000 | 18000 | 18000 | 24000 | 24000 | 24000 |
| 101 | 33691202/2 | Դիցինոն 2.0 250 մգ մգ/էտամ | 85000 | 85000 | 85000 | 127500 | 127500 | 127500 | 170000 | 170000 | 170000 |
| 102 | 33621620/1 | Վերոշպիրոն 25 մգ/սպինորոլակ | 26250 | 26250 | 26250 | 39375 | 39375 | 39375 | 52500 | 52500 | 52500 |

**ԳՆՈՐԴ**
<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ Ճամբարակ մ/ճ
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165
Էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքոնյան

ստորագրություն

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Նատալի Ֆրամ» ՍՊԸ
Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

Հավելված N 00000004

| Կատարող | | Պատվիրատու |
|---|---|---|
| Նատալի ֆարմ ՍՊԸ | | Ճամբարակի Առողջության Կենտրոն ՓԲԸ |
| հասցե՝ Տիչինայի փ. 3-րդ նրբանցք 2/2 | | ք. Ճամբարակ, Տ. Մեծի 3 |
| Հ/Հ 1570005065330100 | | Հ/Հ16023012502500 |
| ՀՎՀՀ01222567 | | ՀՎՀՀ՝ 08617165 |
| Ամերիաբանկ ՓԲԸ | | ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

28.04.2018

Պայմանագրի անվանումը՝ Դեղորայքի գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 16,04,2018
Պայմանագրի համարը՝ ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08 дата
Պատվիրատուն, ի դեմս
և Կատարողը՝ ի դեմս ընկերության տնօրեն
Ա. Ասատրյան, հիմք ընդունելով, պայմանագրի կատարման վերաբերյալ ' " '20 թ
կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակցությունն այն
մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված մատակարարումները
համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին և
գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի
մասին.
Պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը մատակարարել է հետրյալ ապրանքերը՝

| Մատակարարված ապրանքների | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակական ցուցանիշ | | Կատարման ժամկետը | | | |
| Անվանումը տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | Փաստացի | Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
| Սիբազոն (Դիազեպամ) ամպ. 0,5% 2մլ №10 | | 15 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 12000 | Ըստ պայմանագրի |
| Ադրենալինի հիդրոքլորիդ ամպ. 0,18% №10 | | 2 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 2660 | Ըստ պայմանագրի |
| Ամոքսիկլավ դ/հ 625մգ №15 | | 10 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 17400 | Ըստ պայմանագրի |
| Ատրոպինի Սուլֆատ ամպ. մ/մ ն/ե 0,1% 1մլ №10 | | 3 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 1620 | Ըստ պայմանագրի |
| Բետադին հեշտոց. մոմիկ 200մգ №14 | | 7 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 11760 | Ըստ պայմանագրի |
| Բիպրոլ դ/հ 5մգ №30 | | 8 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 1896 | Ըստ պայմանագրի |
| Հեպարին սրվ. 5 000ԱՄ/մլ 5մլ №1 | | 13 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 10660 | Ըստ պայմանագրի |
| Դեքսամեթազոն ամպ. 4մգ/մլ 1մլ №5 | | 100 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 23000 | Ըստ պայմանագրի |
| Դիկլակ ԻԴ դ/հ 75մգ №20 | | 8 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 8320 | Ըստ պայմանագրի |
| Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5մլ №10 | | 6 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 12000 | Ըստ պայմանագրի |
| Դիցինոն ամպ. 250մգ 2մլ №50 | | 10 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 85000 | Ըստ պայմանագրի |
| Իբուֆեն օշարակ 100մգ/5մլ 100մլ | | 100 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 68000 | Ըստ պայմանագրի |
| Կլեմաստին-Բորիմեդ ամպ. 0,1% 2մլ №10 | | 3 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 5626 | Ըստ պայմանագրի |
| Կոկարբոքսիլազա ամպ. 50մգ 2մլ №10 լուծիչով | | 30 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 50700 | Ըստ պայմանագրի |
| Լինեքս դ/պ №16 | | 25 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 17200 | Ըստ պայմանագրի |
| Սինտոմիցինի նրբամածուկ 10% 25գ | | 20 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 6400 | Ըստ պայմանագրի |
| Հեպարին քսուք 25գ | | 35 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 18725 | Ըստ պայմանագրի |
| Մետրոնիդազոլ դ/հ 500մգ №20 | | 20 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 17600 | Ըստ պայմանագրի |
| Միլգամմա ամպ. 2մլ №5 | | 16 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 37600 | Ըստ պայմանագրի |
| Նատրիումի քլորիդ ամպ. 0,9% 10մլ №10 | | 15 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 10620 | Ըստ պայմանագրի |
| Ռեգիդրոն դ/փոշի փաթ. 18,9գ №1 | | 250 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 58750 | Ըստ պայմանագրի |
| Գլիցերին մոմիկ 1գ №10 | | 15 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 12900 | Ըստ պայմանագրի |
| Սետալ MR №60 | | 3 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 3924 | Ըստ պայմանագրի |
| Սպազմատոն ամպ. 5մլ №10 | | 10 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 14351 | Ըստ պայմանագրի |
| Տավեգիլ դ/հ 1մգ №20 | | 4 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 5040 | Ըստ պայմանագրի |
| Ֆերրում Լեկ մ/մ ամպ. 100մգ/2մլ №5 | | 1 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 3600 | Ըստ պայմանագրի |
| Ցետամոլ մոմիկ 325մգ №10 | | 20 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 12600 | Ըստ պայմանագրի |
| Ցեֆտրիաքսոն ն/ե և մ/մ սրվ. 1գ | | 100 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 14700 | Ըստ պայմանագրի |
| Էրեսպալ դ/հ 80մգ №30 | | 2 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 6608 | Ըստ պայմանագրի |
| Էսենցիալե ամպ. 5մլ №5 | | 15 | Ըստ պայմանագրի | 28.04.2018 | 46875 | Ըստ պայմանագրի |
| Ընդամենը | | | | | 598136 | |
| Հինգ հարյուր իննսունութ հազար հարյուր երեսունվեց | | | | | | |

Վերոհիշյալ ապրանքների իրականացման [illegible] հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են.

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ

Հավելված 4.1
16,04,2018թ կնքված
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08 дата
ծածկագրով գնման պայմանագրի

# Ակտ

## Պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյ

Սույնով արձանագրվում է, որ Ճամբարակի Առողջութ (այսուհետ՝ Գնորդ) և Նատալի ֆարմ ՍՊԸ -ի (այսուհետ վաճառող) մինչև -ին կնքված ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08 дв գնման պայմանագրի շրջանակում վաճառքը 28.04.2018 -ին հանձնման - ընդունման նպատակով գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակային ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| Սիբազոն (Դիազեպամ) ամպ. 0,5% 2մլ №10 | 15 | տուփ |
| Ադրենալինի հիդրոքլորիդ ամպ. 0,18% №10 | 2 | տուփ |
| Ամոքսիկլավ դ/հ 625մգ №15 | 10 | տուփ |
| Ատրոպինի Սուլֆատ ամպ. մ/մ ն/ե 0,1% 1մլ №10 | 3 | տուփ |
| Բետադին հեշտոց. մոմիկ 200մգ №14 | 7 | տուփ |
| Բիպրոլ դ/հ 5մգ №30 | 8 | տուփ |
| Հեպարին սրվ. 5 000ԱՄ/մլ 5մլ №1 | 13 | տուփ |
| Դեքսամեթազոն ամպ. 4մգ/մլ 1մլ №5 | 100 | տուփ |
| Դիկլակ ԻԴ դ/հ 75մգ №20 | 8 | տուփ |
| Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5մլ №10 | 6 | տուփ |
| Դիցինոն ամպ. 250մգ 2մլ №50 | 10 | տուփ |
| Իբուֆեն օշարակ 100մգ/5մլ 100մլ | 100 | հատ |
| Կլեմաստին-Բորիմեդ ամպ. 0,1% 2մլ №10 | 3 | տուփ |
| Կոկարբոքսիլազա ամպ. 50մգ 2մլ №10 լուծիչով | 30 | տուփ |
| Լինեքս դ/պ №16 | 25 | տուփ |
| Սինտոմիցինի նրբամածուկ 10% 25գ | 20 | հատ |
| Հեպարին քսուք 25գ | 35 | հատ |
| Մետրոնիդազոլ դ/հ 500մգ №20 | 20 | տուփ |
| Միլգամմա ամպ. 2մլ №5 | 16 | տուփ |
| Նատրիումի քլորիդ ամպ. 0,9% 10մլ №10 | 15 | տուփ |
| Ռեգիդրոն դ/փոշի փաթ. 18,9գ №1 | 250 | հատ |
| Գլիցերին մոմիկ 1գ №10 | 15 | տուփ |
| Սետալ MR №60 | 3 | տուփ |
| Սպազմատոն ամպ. 5մլ №10 | 10 | տուփ |
| Տավեգիլ դ/հ 1մգ №20 | 4 | տուփ |
| Ֆերրում Լեկ մ/մ ամպ. 100մգ/2մլ №5 | 1 | տուփ |
| Ցետամոլ մոմիկ 325մգ №10 | 20 | տուփ |
| Ցեֆտրիաքսոն ն/ե և մ/մ սրվ. 1գ | 100 | ֆլ |
| Էրեսպալ դ/հ 80մգ №30 | 2 | տուփ |
| Էսենցիալե ամպ. 5մլ №5 | 15 | տուփ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ

Կողմերը

**Հանձնեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

**ընդունեց**

ազգանուն, անուն

ստորագրություն